

ՀԱՅՈՑ ԲԱՆԱՍՏԵՂԵԱԿԱՆ ԼԵՆԻՆԱԳԱՏՈՒՄԻ ՍԿԶԵՆԱԿՈՐՈՒՄԸ

Ս. Ա. ՄԱՆՈՒՅԱՆ

Բողոքում ազգերի լեզուներով վաղուց արդեն շնչում է հավերժ կենդանի, տոհմնեղ ու անսպառ լենինյան թեման։ Ոչ միայն ժամանակին Մ. Գորկու նշած ժողովրդական բանահյուսությունը¹, այլև առհասարակ, հանուր մարդկության առաջավոր միաբեր, դրականությունն ու արվեստը Լենինին բարձրացրել են հին դարերի առաստելական հերոս Պրոմեթեոսից շատ ավելի վեր։ Հիմարտի, վաղիմիր Իլյիչի անունը «ազգերը ու ցեղերը արդեն լեզունդ են դարձրել»² և այդ յուսավոր անվան շուրջը հրաշակերտել են բանահյուսական, դրական ու երաժշտական, գեղարվեստական ու բանդակագործական, թատերական ու կինոարվեստի բազմաժանր, բազմահնչյուն, բազմերանգ կտավների անսահման մի հարստություն, որն բնորոշված է անվանել լենինյանա՝ լենինապատում։

«Ուղևորական դրականության լենինյանան, բոտ Լուիյան, սկզբնավորվեց հեղափոխության առաջին օրերից», — գրել է Գ. Մարկովը³։ Արդարև, վաղիմիր Իլյիչ Լենինի հանձնարով ճառագած մեծ Հոկտեմբերը մարդկության պատմության մեջ եղանակավորեց նոր դարաշրջան՝ աղատության, հավասարության, եղբայրության ու երջանիկ հասարակարգի հաստատման դարաշրջանը, որն ամենայն իրավամբ կոչվում է Լենինյան։ Ով ի՞նչը կարող էր ավելի բնական ու օրինալի լինել, բան այն, որ բազմառանց, բայց սպառառենչ, հայ ժողովրդի առաջավոր գրողները սկզբից եկավ սրտանց ողջունեցին, խանդավառությամբ երգեցին ու պատկերեցին լենինյան դարաշրջանի յուսարացը։ Ամենայն հայոց բանաստեղծ Հովհ. Խումանյանը, հոգուստ ուղևորական նորաստեղծ իշխանության իր հանրածանոթ արդառավոր գործունեությանը զուգընթաց, ի խորոց սրտի հյուսեց «երգը հանուր բերկրանքի», ջերմ, լավատեսական, ուրախ հոգով հաստատեց, թե Հոկտեմբերով սկսվում է «հին օրերի վերալույսը» և «բարձրությամբ նոր կյանքի»⁴։ Հայ նոր քնարերգության ճանաչված նահապետ Հովհ. Հովհաննիսյանը 1918-ին սիրով ստանձնեց Բաբյի լուսավորության բաժնի վարիչի պաշտոնը⁵։ Անվանի վարպետ Ավ. Իսահակյանը 1919-ին ստեղծեց «Ստամա Մհեր» պոեմը, յուրովի ցույց տալով, թե Հոկտեմբերի շնորհիվ իրականանում է աշխատավոր մարդու վաղեմի երազանքը՝ խորտակված «չար աշխարհի» փրատակների վրա հիմնվում է «առակի օրենք և իրավունք», բարիքներն արադրողը տեր է դառնում իր «սուրբ վաստակին, արդար հացին»։ Անուններ և օրինակներ կարելի է շատ բերել։ Սակայն մեզ հուզող թեմայի տեսակե-

¹ Տե՛ս Մ. Գորկի, Գրական-հրապարակախոսական հոդվածներ, Երևան, 1949, էջ 293։

² Ի. Չարեկց, Երկերի ժողովածու, Երևան, 1968, հ. 4, էջ 65։

³ Տե՛ս «Литературная газета», 1969, № 51, стр. 2։

⁴ Հովհ. Խումանյան, Երկերի ժողովածու, Երևան, 1950, հ. 1, էջ 196։

⁵ Տե՛ս «История армянской советской литературы», М., 1966, стр. 531։

տից, հայ պրոլետարական գրականության հետ միասին, ամենահատկանշականը Վ. Տերյանի և Ե. Չարենցի 1917—1920-ի պոեզիան է⁶։

Տերյանը 1917 թ. դեկտեմբերից աշխատում էր Վ. Ի. Լենինի ստեղծած ու ղեկավարած սովետական պետության Ազգությունների գործերի ժողովրդական կոմիտեի (Հայկական գործերի ժողովրդական կոմիտեի Վ. Ա. Ավանես-սովի տեղակալն էր)։ Նա մասնակցել է Բրեստի հաշտության բանակցություններին և «Թուրքահայաստանի մասին» դեկրետի նախապատրաստմանը, գրել է «Ի՞նչ է ասում Լենինը գյուղացիներին» հոդվածը, սիրով ու հմտությամբ թարգմանել է Լենինի «Պետություն և հեղափոխություն» և «Կարլ Մարքս» նշանավոր աշխատությունները։ Տերյանն անձամբ տեսակցել և զրուցել է Վլադիմիր Իլյիչի հետ, խորապես զգացել է Լենինյան մտքի պայծառությունը, գործի վեհությունը և անձի հմայքը։ 1917 թ. աշնանը Պ. Մակինցյանին ուղղված մի նամակում նա գրել է. «Լենինը շատ պայծառ է...»։ Նույն օրերին իր եղբորը՝ Ներսեսին հղած նամակում շարունակել է.

«Լենինն է մեծապայծառ ու վեհափառ..., պարզ ու պայծառափայլ է..., լուսավոր ու գրավիչ է և խոսելիս այնքան քափանցող, որ ակամա վտխեցնում ես՝ թե քո իսկ դրած հարցում նա սովելի շատ ցիտե, քան դու ինքդ»⁷։

Լենինյան խորաթափանց, պարզ ու պայծառ միտքը լուսավորեց Տերյանի ուղին և ներշնչեց ստեղծելու «Հոկտեմբերյան երգեր» շարքը։ Այդ երգերն, անտարակույս, տերյանական ողջ պոեզիայի տրամաբանական զարգացման արգասիք են⁸ և հնչում են որպես Հոկտեմբերին հաղթանակած Լենինյան գաղափարների ոգեշունչ հիմն։ Հոգով ու մտքով վերածնված բանաստեղծը մերթ քաղաքացիական բուռն կրքոտությամբ երգում է հնօրյա թաղերի ու դահերի անկումը («Ծկավ երկաթե քայլով...»), «ապական ու հին» աշխարհի կործանումը («Ջարդեցե՛ք անդու...»), մերթ էլ խնդուն ու խանդավառ աղ-դարտում է, թե «նոր օր է բացվում աղբերի համար» («նոր օր է բացվում...»), վառվում է մարդկության «նոր կյանքի արշալույսը» («Շողա...»), ու սրտանց ողջունելով Հոկտեմբերի ծածանած «կարմիր, արյունաբորբ ազատության զրուշը» («Քեզ եմ երգում...»), «նմանողության» մեջ ասում է.

— Ողջո՛ւյն քեզ, աղմուկ նորածին կյանքի,

— Ողջո՛ւյն քեզ, զոդանջ փրկարար կյանքի դանդի,

— Ողջո՛ւյն քեզ, բացվող պայծառ առավոտ...

Վ. Տերյանի «Հոկտեմբերյան երգերը» սովետական տոհմի առաջին ծաղիկներից են, ողողված Հոկտեմբերին բացված պայծառ առավոտի լույսով ու էությամբ և ոգով առնչվում են մեր բանաստեղծական Լենինապոստամին ու նույնը պետք է ասել Ե. Չարենցի հեղափոխական հրաշակերտ պոեմների

⁶ Մեր խոսքն, իհարկե, միայն բանաստեղծների մասին է։ Տեղի սղության պատճառով չենք անդրադառնում Ե. Կուրդիսյանի, Ա. Վշտունու, Հ. Կամարու (Բեմանյան), Ա. Կոմիսյանի, Խ. Լորենցի (Բորյան), Արմ. Բորյանի և ուրիշների չափածո ստեղծագործություններին, որոնց վրա խիստ զդարի է մեծ Հոկտեմբերի և Լենինյան դադափարների ազդեցությունը։

⁷ Վ. Տերյան, Երկերի ժողովածու, Երևան, 1963, Վ. 3, էջ 481։

⁸ Նույն տեղում, էջ 481—482։

⁹ Ավելի մանրամասն տե՛ս Վ. Պարտիզանի, Մթնշաղից մինչև հեղափոխության մրդկահավը («Հոկտեմբերը և հայ գրականությունը», հոդվածների ժողովածու, Երևան, 1967, էջ 147—211)։

մասին՝ «Սումա», «Ամբոխները խելագարված», «Երգ ժողովրդի մասին», «Բրոն-
զե թևեր կարմիր դալիբի», «Ասենապոեմ» և այլն: Լայնահուն, ուժգնաթափ
այս էպիքական կտավներում բանաստեղծն իր «շոնդալից, պայծառ քնարով»
շեփուրում է պատմական ճշմարտությունն այն մասին, որ «անեծքով գերված»
աշխարհը վերափոխող «Դոժ խմբերով, հազարանուն» հեղափոխական զանգ-
վածները լենինյան ուղիով ղեկավարում են «Գեղի արևը», ղեկի լույս և աղատու-
թյուն («Ամբոխները խելագարված»), համոզում է, որ երբեք և ոչ մի ուժ չի
հաղթի այն «ժողովրդին, որ կյանքում իր բախտի տերն է արդեն» և հավատ է
ներշնչում, թե լենինյան ճշմարտությունը վաղ թե ուշ հասնելու է «ժողովրդներին
բոլոր կողմերի, բոլոր կողմերում տառապող մարդուն» («Նաիրյան երկրից»):
Ի՞նչ Տերյանի և Չարենցի պոեզիային ավելացնենք նաև հայ պրոլետարական
դրականության հիմնադիր Հ. Հակոբյանի «Հավասարություն» պոեմը, որտեղ
մարքս-լենինյան ուսմունքով ղեկավարված բանաստեղծը պատկերում է Հոկտեմբե-
րով սկսվող ապագա սոցիալիստական հասարակությունը, ապա կարող ենք
ասել, որ արդեն 1917-ին գրվում է հայ դրական լենինապատումի անմիջական
հիմքը¹⁰:

Արդ, ե՞րբ է երևան եկել անմիջականորեն, անձամբ Վ. Ի. Լենինին նվիր-
ված անդրանիկ հեղափոխատական ստեղծագործությունը: Հավաստի ու վերջնա-
կան պատասխան տալ դժվարանում ենք: Բայց, որքան մեզ հայտնի է, մեծ
առաջնորդի մասին առաջին երգերն ու ոտանավորները հյուսել են ժողովրդա-
կան բանաստեղծները, հեղափոխական բանվորներն ու գինյվորները¹¹: Գիտենք,
որ կարելի է սովետական բանաստեղծ, Պետերբուրգի հեմալա բանվոր, ռու-
սական երեք հեղափոխությունների մասնակից Յարմարի էրիկովիչ Վիրտոնենը
1917-ի ապրիլին եղել է Բեռլինում գտնվող այն բանվորների շարքում, որոնք
տարադրությունից վերադարձող Լենինին ուղեկցել են Պետրոգրադ, Ֆինլանդա-
կան կայսրանում լսել է սոցիալիստական հեղափոխության մասին ապրիլի
3(16)-ի լենինյան հանրահռչակ պատմական ճառը և նույն օրերին գրել է
«Լենինի ժամանումը» («Присезд Ленина») բանաստեղծությունը: Գիտենք նաև,
որ վրաց սովետական տոհմի առաջին շինարարներից մեկը՝ Տիցիան Տաբի-
ձեն, 1917-ի հոկտեմբերի 25-ին (նոյեմբերի 7-ին) բանաստեղծություն է ձեռնել
Հոկտեմբերյան հաղթանակին ու մեծ Լենինին: Վերջապես գիտենք, որ նույն
օրերին մեր դրականության համեստ մշակ Հակոբ Խանլարյանը տղազրել է
«Հեղափոխություն» ոտանավորը, որտեղ Հոկտեմբերը պատկերելով իրրեզու-
բների խափարը ցրող, պալատ ու տաճար հիմնիվեր այրող հրդեհ, որը վառել են

¹⁰ Հայկական լենինիանայի ակունքների մասին խոսելիս, անկասկած, պետք է նկատի
ունենալ երկու կարևոր հանգամանք՝ հայտնի է, սկսած անցյալ դարի վերջերից
և հատկապես ներկա դարակրից Վ. Ի. Լենինի հետ անձամբ ծանոթ են եղել, կապ են ունեցել
և պայքարի բոլոր բնագավառներում սերտորեն համագործակցել են հավատարիմ հայ լենինյան-
ներ Ի. Լալայանցը, Բ. Կուսնյանցը, Սա. Շահումյանը, Ս. Սպանդարյանը, Ա. Մյասնիկյանը,
Ա. Վերմիշը, Կամոն, շատ ուրիշներ: Հասկանալի է, որ Իլյիչի հայ բարեկամները, աշակերտներն
ու մարտական գիտակիցները խոսել ու գրել են հանճարեղ ուսուցչի ու ղեկավարի մասին: Երկ-
րորդ՝ տակավին դարակրի ձևավորված հայ պրոլետարական դրականությունը լենինյան կու-
սակցության պայքարի զենքերից էր, ներթոմած մարքս-լենինյան զազափարախոսությամբ, և մի
կամուրջ եղավ մեր դասական ու սովետական մշակույթի միջև՝ ուղիղ զենքով ղեկավարող
սոցիալիստական ռեալիզմի հայ դրականությունը:

¹¹ Տե՛ս «Литературная газета», 1969, № 34, стр. 7.

հեղափոխական զանգվածները, հեղինակը նաև ասում է. թե «Մարդկային ծովից ելնում է լենինն՝ առաջնորդը մեծ...» ու դիմում մարդկանց.

— Ընկերներ, բռնենք բարձր, անսասան
մեր մեծ դրոշակ,
Թող մեր ջաշերը միանան, դառնան
հզոր արեգակ...

Ուրիշ նմանօրինակ փաստեր ևս կան։ Սակայն անհերքելի ճշմարտություն է ընդհանուր ձանաչում գտած այն տեսակետը, ըստ որի իսկական գրական ժլենինիանայի ակունքների մոտ կանգնած են նրանք, որոնց իրավամբ անվանում են սոցիալիստական ռեալիզմի գրականության սկզբնավորողներ՝ Գորկին և Մայակովսկին¹², մեզանում՝ Հ. Հակոբյանը և Ե. Չարենցը։

Նշանակալի է, անշուշտ, որ առաջինը հայ իրականության մեջ և առաջիններից մեկը ամբողջ աշխարհում, Հակոբ Հակոբյանն է, որ տակավին 1919-ին հանդես է եկել հատկապես Վլադիմիր Իլյիչ լենինին նվիրված առանձին բանաստեղծությամբ՝ «Վ. Ի. լենինին»։ Եվ այդ, իհարկե, օրինաչափ է։ Հակոբյանը 1904-ից բոլշևիկ էր, լենինյան գվարդիայի հավատարիմ զինվոր։ Արդեն այդ ժամանակ ռեուլյուցիայի և սոցիալիզմի հույզերը նրա հոգեկան տարերքն էին կազմում¹³ և իրենց մարմնավորումն էին գտնում «որոտի պես հատու, խրոխտ» (սիմ երգը)՝ նրա պոեզիայում։ Իզուր չէ, որ նրան անվանել են «հայ-բանաստեղծ-Գորկի»¹⁴ իսկ ինքն իր մասին իրավացիորեն ասել է, թե սկսած ռուսական առաջին հեղափոխության տարիներից «հեղափոխական մարքսիզմի գաղափարներն էին, որ տարածում էի բանաստեղծություններիս միջոցով»¹⁵։

Տրամաբանական է, ուրեմն, որ հեղափոխության զինվորը պիտի բանաստեղծություն ձևեր նույն հեղափոխության հանձարին։ Ու նշանակալի է նաև, որ հիշյալ բանաստեղծությունը հասել է անձամբ իրեն՝ Վ. Ի. լենինին։ Բանասեր Գ. Հովնանը պատմում է, թե 1934-ին, երբ ինքը տատարվել էր «Աշխարհի բանաստեղծները լենինի մասին», ռուսերեն ժողովածուն, վերջինս հրատարակության հանձնելուց առաջ հանդիպել ու խորհրդակցել է ն. Կ. Կրուպսկայայի հետ, որը, ծանոթանալով նյութերին, ասել է. «Հակոբ Հակոբյանի բանաստեղծությունը՝ «լենինի պատկերի առաջ»¹⁶, ինձ ծանոթ է, լենինին նույնպես։ Այդ բանաստեղծության մեքենագրված մի օրինակը լույս է հարկել, լենինի ծննդյան 50-ամյակի օրերին, տվեց Վլադիմիր Իլյիչին և ասաց. — մի հայ բանաստեղծ է ուղարկել և խնդրել է հանձնել ձեզ¹⁷։ Բայց, որքան հիշում

¹² Նույն տեղում, № 50, էջ 1 (խմբագրական)։

¹³ Ա. Գ. Ի ս ա հ ա կ յ ա ն, Երկեր, Երևան, 1959, հ. 4, էջ 134։

¹⁴ Տե՛ս «Путь Правды», 1914, № 50 (М.—КП. ստորագրությամբ Արտ. Կարինյանի հոդվածը)։

¹⁵ Հ. Հ ա կ ո բ յ ա ն, Երկեր, Երևան, 1951, էջ 351։

¹⁶ Այդ վերնագրով («Перед портретом Ленина») այն տպագրվել է Գ. Հովնանի կազմած «Поэты мира о Ленина» ժողովածուում, որը լույս է տեսել 1934 թ. Մոսկվայում և բացվում է Հ. Հակոբյանի բանաստեղծությամբ։

¹⁷ Վ. Ի. լենինի ծննդյան 50-ամյակին նվիրված հանդիսավոր նիստը տեղի է ունեցել 1920 թ. ապրիլի 23-ին, Իկ(բ)Կ Մոսկվայի կոմիտեում, Ա. Ֆ. Մյասնիկյանի նախագահությամբ։ Հորկյարը դահլիճ է մտել միայն նիստի վերջում, մտերիմների խնդրանքով՝ մասնակիցներին իրենց կայության հարգելու համար։ Ուրեմն այդտեղ չէ, որ Ա. Վ. Լույսյարսկին կարդացել ու լենինին է հանձնել Հակոբյանի բանաստեղծությունը, այլ ընտանեկան միջավայրում։

ևս, այս թարգմանությունը չէր¹⁸։ Գուցե Անատոլի Վասիլևիչը կարգաց, դրա համար այնպես լավ էր հնչում։ Քայց հիշում եմ, ավելի տպավորիչ էր¹⁹։

Ուշադրաւ այս հուշերում Գ. Հովնանը չի նշում, թե Ն. Կ. Կրուպսկայան ի՞նչ է տեսել հիշյալ բանաստեղծության նկատմամբ Վ. Ի. Լենինի վերաբերմունքի մասին²⁰։ Հանրահայտ է, որ Իլյիչը մարդուն զարդարող համեստությամբ, էլ չանդուրժում իր անձի որեւէ պաշտամունք, զովեստ ու մեծարանք, բայց նրան օտար չէր մարդկայնորեն մտերիմ, անկեղծ, բարեկամական սրտալի խոսքը։ Էապես այդպիսին է Հակոբյանի փոքրիկ բանաստեղծությունը, որը Լենինի մարտական ընկերոջ ու զինակցի հեղինակավոր վկայությամբ լավ է հնչել և տպավորություն է թողել։ Հիրավի, նրանում չկան ճշմարտության դեմ մեղանշող շոտյոլ զովեստներ։ Այն ոչ այլ ինչ է, եթե ոչ հավատարիմ աշակերտի ու բարեկամի պարզ, անպաշտոյն, անմիջական խոսք։ Հանձարեղ ուսուցչի ու ղեկավարի մասին։ Բանաստեղծը մի-երկու սեղմ բնութագրումներով (ժապկատու անհաշտ-կոխիկների դաշտ» և այլն) հաստատում է միայն այն ճշմարտությունը, որ Լենինը իմաստուն ու բաշ զորավարի պես ղեկավարել է հին աշխարհի դեմ ուղղված անհաշտ ու անողոր հերոսամարտերը, որոնք պսակվել են փայլուն հաղթանակով։ Եվ այդ է պատճառը, որ Վլադիմիր Իլյիչը պաշտամունքը դարձավ ամենախիստ հիշենք, որ մեծատաղանդ Վ. Մայակովսկին իր հրուշակավոր տղամուսնու զրկել է, թե Լենինը ոչ թե դարձավ ժառանգորդ ողորմածությունը ասածո՞ւ²¹, այլ իր հանձարեղ մտքի ու գործի շնորհիվ, մարդկությանը մատուցած ծառայությունների համար, հրախառնալարտ զանգվածների կամքով։

Պետք է նկատել նաև, որ Հ. Հակոբյանի բանաստեղծությունը զրկված է 1919-ին, երբ օտարերկրյա իմպերիալիստական զավթիչները և ներքին հակահեղափոխական, սպիտակգլուխները սև ուժերը, մինչև ատամները զինված, հղնում էին տառապիլ սովետական իշխանությունը, վերականգնել կործանված հին կտրվելու Այդ պայմաններում, անտարակույս, առավել տպավորիչ էր բանաստեղծի խոսքն այն մասին, որ Լենինը «անհաս ու հպարտ» լիտան պես կանգնել է թշնամական հողմերի առաջ ու

նայում է հեղինոտ անցած աշխարհին
 Եվ կարծես ծագում Բուրժուաներին.
 — Որքան էլ ուզես վեր կենալ նորից՝
 Գտնադարաված եր մահվան այսօրից։

Կարևոր հանգամանք է և այն, որ Հակոբյանը դիտել ու ընդգծել է Լենինյան իմաստուն միտքը, բաշակորով ողին, հզոր կտմբը, խորին հավատար սովետական կարգերի ուժի ու ապագայի նկատմամբ, հեղինոտ հայացքը և անհաշտ վերաբերմունքը զեպի դասակարգային թշնամիները։

18 Մեկ հայտնի չէ, թե ով է թարգմանել հիշյալ սրինակը և որտեղ է այն պահվում, եթե պահպանվել է։ Գիտենք, որ 1917—1920 թթ. Հակոբյանին թարգմանել են Նիկ. Ռեուտե, Ս. Շարտին, Ռ. Իվներ։ Բայց հնարավոր է, որ տողացի թարգմանությունը կատարել է հեղինակը, խմբագրել է նրա վտղեմի բարեկամ Ա. Վ. Լունյարսկին։

19 Տե՛ս «Սովետական Հայաստան», 11. IV. 1969։

20 Ինքը՝ Կրուպսկայան, արժանին հատուցելով Լենինյան թեմային, միաժամանակ մերժել է ճշմարտությունն ազավաղող ճառային, անարվեստ ստեղծագործությունները Գ. Հովնանի նշված հուշերից գատ, տե՛ս «Летопись жизни и творчества В. И. Ленина», 1958, № 4։

21 Վ. Վ. Մայակովսկի, Վլադիմիր Իլյիչ Լենին, պոեմ, Երևան, 1964, էջ 8։

Հետագայում, մասնավորապես Վ. Ի. Լենինի մահվան օրերին, Հ. Հակոբյանը գրեց «Լենինը անմահ...» բանաստեղծությունը և «Անմահներից անմահը», «Թաղում են», «Գուդոկները ողբում են» հուզառատ արձակ էջերը, որոնց հիմնական մոտիվը Իլյիչի անմահության գաղափարն է:

«...Եթե Լենինը հեռացավ մեզանից, մի՞թե և մեռավ նա:

Ասենք՝ կարո՞ղ է միթե մեռնել արևը հավիտենական, միթե՞ կարող է ցամաքել օվկիանոսը, միթե՞ աստղերը կարող են հանգչել միթե՞ Հիմալայր կարող է փլվել:

— Երբե՞ք:

Չի կարող, ուրեմն մեռնել և Լենինը, որովհետև նրա ամեն մի գործը՝ մի-մի վառ արև, նրա ամեն մի պատգամը՝ մի-մի շցամաքող օվկիանոս, նրա թողած ավանդները՝ մի-մի պայծառ աստղ, նրա տված դասերն ու փորձառությունները՝ մի-մի անսասան Հիմալայ»²²: Բանաստեղծության մեջ ավելացնում է, որ Լեֆեռնյանի արևը մարի, ծովը ցամաքի՝

Ու Լենինը դեռ

Կմնա անմահ բյուրավոր դարեր,

Նրա անունը

Այս ամենից էլ հղո՞ր է, անմե՞ռ...

Հ. Հակոբյանի գրչին են պատկանում սոցիալիզմի կառուցման լենինյան ծրագիրը կենսագործելու համար մեր երկրում ծավալված ստեղծարար աշխատանքն ու պայքարը պատկերող առաջին մեծարժեք էպիքական կտավներից «Թուշեկի է Շիր-Կանալը» (1924) և «Վոլխովստոյը» (1925), ինչպես նաև «Լենինգրադյան պոեմի» լավագույն հատվածներից մեկը՝ «Լենինգրադը», որի սրտահույզ տողերում ղրսկորված է համաժողովրդական բուռն սիրո ու երախտագիտության ղգացումը դեպի Լենինը և նրա պանծալի անունը կրող հեղափոխության բնօրրանը: Այս ամենն, անշուշտ, Հ. Հակոբյանի լուրջ ծառայությունն է մեր բանաստեղծական լենինապատմի սկզբնավորման ու զարգացման գործին:

Լենինյան թեման հայ գրականության մեջ զեղարվեստական զարգացման մի նոր աստիճանի բարձրացրեց սովետական ժամանակաշրջանի հայ մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցը: Չենք անտեսում բնավ ժողովրդական բանահյուսության լենինյան երգաչափը և մանավանդ «Լենին փաշա» հայտնի վիպերգը: Սա հյուսված է տակավին Վ. Ի. Լենինի կենդանության օրոք, պատիվ է բերում «Սասունցի Դավիթ» հանճարեղ էպոսն ստեղծող մեր ժողովրդին: Ինչ վերաբերում է Չարենցին, ապա վերամշակելով «Ամենապոեմը», նա ընդամենը մեկ քառատողում հմուտ արվեստագետի գրչով ուղղակի քանդակել է Վլադիմիր Իլյիչի դիմանկարը.

Ու ելած հողմերից այդ վառ,

Որպեսզի խորտակե այդ հինը՝

Լեռնացավ, որպես ղեկավար,

Ու կանգնեց Լենինը:

²² Հ. Հակոբյան, Երկերի ժողովածու, Երևան, 1958, հ. 4, էջ 143:

Ինչպես տեսնում ենք, լեռները ներկալացվում է որպես վառ հողմերից, մրրիկներից ելած մի նոր վառահղին, հայ ժողովրդական ավանդակապի այն հրա-
ծին, բոցամորուս հերոսը, որը խորհրդանշում է արև, լույս, կենսատու ջերմու-
թյուն։ Չարենցը սկզբից եկի որոնում է ու գտնում իր ասած «Ինքնատիպ, եղա-
կի և անկրկնելի նրբերանդը, այն, որ հատուկ է միմիայն ավյալ հայս դեպքում»
հայ — Ս. Մ.) զրականությունը և նրա լավագույն ներկայացուցիչներին²³։

«Ամենապոետի» վերոհիշյալ բառատողի մեջ, հենց միայն եզակիորեն
դիպուկ «լեռնացու» բառով, բանասերգծն իմաստավորել և ընդհանրացրել է
պատմական այն փաստը, որ լեռներ ծնունդ է առել մարդկության առաջավոր
մտքից ու ազատագրական պայքարից և լեռան նման վեր է խոյացել։ Չարենցի
արյան մեջ էր այն զգացումը, որ հետագայում պիտի ձևակերպվեր հետևյալ
սուղերում։

Մեր վիթխարի դարը ահա
Շառաշուկով, ընդդեմ հնի,
Բարձրացել է, որպես վահան,
Հսկա անունը լեռնինի։

Յուրարանյուր նյարդով, սրտի բոլոր լարերով Չարենցը կապված էր լե-
ռինյան դարին, հողով ու մտքով զգում, դիտակցում էր լեռնինի մեծությունն ու
վեհությունը և լեռնյան թևման ըստ արժանիության բարձրացնելու դժվարություն-
նր։ Հայտնի է, որ Վ. Մայակովսկին վախ ու տաղանապ է հայտնել, թե կեղծ-
շողշողուն ու շառաշուն բառերը կարող են ծածկել խնկական, իմաստուն և
մարդկային վիթխարի ևակառք լեռնյան, թե մեծարանքների սահմանված
կարգ-ստատուսը, թափուրներն ու դամբարանները կարող են սոժյուղով բաղցր
ու մեղցրա ողողել-մթաղել լեռնյան պարզությունը²⁴։ Ճշմարիտ ու մեծ ար-
վեստագետին հատուկ նույն տաղանապն է ունեցել նաև Չարենցը, որը զրել է.

Լեռնին, այո՛, — Լեռնին — Բայց ո՛չ միտինդային,
Բայց ո՛չ թմրուկ թեթև, բայց ո՛չ պլակատ,
Լեռնին — այսօր արդեն ասել է — զաղաթ,
Ասել է — ներքին կառուցումը բո նոր թեմայի
Այդ թեման ուղեանում է այսօր բո մեջ,
Աճում է, բայց ո՛չ այնպես, ինչպես խոտը.
Նա աճում է կամբսով, երկաթով — նա կյանքի առավոտ է՝
Մտքի, խորքի, կառուցման անհուն ելեկ...

Ի. Չարենցի լեռննապատումը հատկանշվում է, ահա, մտքի և հույզի նուրբ
ներդաշնակությամբ, զաղափարական խորությունամբ և զեղարվեստական ար-
տահայտչական միջոցների, նրբերանգների ու հնչերանգների՝ արդարև անհուն
ելեկչներով։ Լայնորեն ծանոթ են «Լեռնին», «Բալլադ Վաղիմիր Իլյիչի, մոմիկի
և մի զույգ կոշիկի մասին», «Լեռնին բերին», «Լեռնին ու Լիլին», «Կոմունարների
պատը Փարիզում», «Մահվան քայլերը» («Մենք փող զարկինք...»), «Չուզունե
մարդու»։

23 Ի. Չարենց, Երկերի ժողովածու, Երևան, 1967, հ. 6, էջ 272։

24 Վ. Վ. Մայակովսկի, Նշվ. գիրքը, էջ 5։

1924-ի հունվարի 21-ին աշխարհը կորցրեց իր մեծագույն զավակին: Մանր ապրելով «կորուստն այս խոր անվերադարձ» («Թուզթ Բանաստեղծ Բարեկամիս...»), արդեն հունվարի 23-ին Չարենցը գրեց «Լենին» բանաստեղծությունը, որի լեյտմոտիվը մեծ առաջնորդի գործի և անվան անմահությունն է: Ենթատեքստում «Թաքցնելով» սրտի կսկիծը, նա հատուկ ընդգծեց, թե Լենինին մահակա, քանզի կա դասակարգը, որը «դարը դարի հետևից սնել է Իլլիին», կան և միշտ կլինեն աշխատավոր մարդիկ, որոնցից յուրաքանչյուրը «տվել է Իլլիին ուղեղին մի թել» և սերնդից-սերունդ իր մեջ կրելու է Իլլիին, կա լենինիզմը՝ մարդկության առաջընթացի ուղին լուսավորող հավերժորեն անմահ ուսմունքը:

Բազում լեզուներով բազմաթիվ բանաստեղծություններ են գրվել Լենինի մահվան առթիվ: Բայց քչերը կարող են դրվել Ե. Չարենցի «Մահվան քայլերգի» կողքին: Սա այն հրգեհրից է, որոնց ուժն ու հմայքը կարելի է զգալ միայն կարդալով: Պարզապես անհնար է վերարտադրել նրա բովանդակությունը, որ ամփոփված է շարենցյան ուժգին ու սահուն, ռիթմիկ ու խաղացկուն, կուռ ու կառուցիկ շափատողերում: Ներդաշնակորեն զուգակցելով քնարականն ու էպիքականը, նուրբ զգացումն ու հեղափոխական կիրքը, բանաստեղծը հերոսաշունչ իր քայլերգում հաստատում է, որ մեծ առաջնորդի մահվան առթիվ լենինյան կուսակցությունը մարտական փող զարկեց, որի արձագանքը «որոտաձայն շառաչեց» աշխարհից-աշխարհ, պալատներում՝ հնչեց իբրև մահվան բոթ, խրճիթներում՝ հզոր մարտակոչ և սարտերում միլիոնավոր, բյուրավոր առաջ բերեց ըմբոստության, պայքարի ու հաղթանակի նոր ալիք ու նոր հավատ: Լենինն, ինչպես ասված է Չարենցի պոեմներից մեկում («Կոմունաների պատը Փարիզում»)՝ «հավաքել էր իր մեջ» բանվորական դասի բազում սերունդների թքրտինքն ու ջանքը», եռանդն ու կամքը, «ամբողջ մեծությունը» և դարձել էր նույն դասի ուղեղը, հոգին, «կարմիր Ղեկավարը», մնալով, սակայն, պարզ ու համեստ, բարի ու հոգատար մարդ:

Այս իրողության սեղմ ու համոզիչ ղեկարվեստակտն արտացոլումն է «Բալլադ Վլադիմիր Իլլիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին»: Ընդամենը երկու և կես փոքրադիր էջ գրավող հակիրճ շափատողերում բանաստեղծը կարողացել է ցույց տալ թե՛ նորաստեղծ սովետական պետության առաջ ծառացած տնտեսական, ռազմական, մշակութային բարդ ու դժվարին խնդիրները, թե՛ այդ ճանձայր, անթիվ հարցերի լուծմամբ զբաղված Իլլիչի հողատարությունը գեղի կենդանի մարդը, թե՛ մի զույգ կոշիկ ստանալու համար Լենինին դիմող ռուս գյուղացու կյանքի զլխավոր նշանաձողերը: Եվ այդ ֆոնի վրա էլ կերտված է առաջնորդի ու մարդու հմայիչ կերպարը՝ լուսեղեն ճակատ՝ «ինչպես ահագին հրկրադուռ», խոհուն ու ժպտացող աչքեր, մտքի ու կամքի «վիթխարի ուժ», սրտաբաց, կատակասեր բնավորություն, մտերմական զրույցից անգամ կարևոր հարցեր պարզելու իմաստություն, խոսքի բյուրեղյա հսակություն և աղեցիկություն:

Ի գեպ, մարդկանց վրա Լենինյան խոսքի անսահման ազդեցության մասին էջեր կան նաև «Մաճկալ Սաքոյի պատմությունը», «Մուտքը» և ուրիշ ստեղծագործություններում: Բանաստեղծի պատկերավոր արտահայտությամբ՝ Լենինը «ջուր էր խմում» ժողովրդի սրտից («Մաճկալ Սաքոյի պատմությունը»), «պատգամներ էր նետում հրթիռների պես վառ», որոնք լուսավորում էին աշխատավոր զանգվածների ուղին և արգասավորում էին հոգիները, ինչպես «կե-

նարար անձրերն... կարող է արգասավորել հրատուշոր անապատը, բռնաբերով ծաղկավոր տափաստանը (ՎՄուտրը, Ահա ինչու հավատում, վստահում, սիրում են Վլադիմիր Իլյիին, անվարան գնում նրա ցույց տված Հանապարհով, մի հշմարտություն, որի կոնկրետ, ռեալիստական վերարտադրությունն է «Լենին Բուրին», որտեղ միաժամանակ արտահայտվում է լենինյան գաղափարների նշանակությունը մատաղ սերնդի կյանքում:

Չարենցյան լենինապատումի մեծարվեստ էջերի շարքում առանձնանում է «Լենինն ու Ալին» պոեմը, որը քիչ թափուկ շատ բան ասելու ցայտուն օրինակ է: Պատմելով իրական մի պարզ մասին, բանաստեղծը գեղարվեստական ընդհանրացման մեծ ուժով պրակտիկում է աշխարհի բազմազգ աշխատավորություն խորին հարգանքը, սերն ու նվիրվածությունը հանձարեղ Լենինին: Աշխատանքի մարդ է թուրք թիավար Ալին: Նա գիտե, որ Մոսկվայում կա մի «Բուրյուր խուլի», որը «հասկանում է Ֆուխարայի հալից», արդար վաստակի մարդկանց մեծ բարեկամն ու պաշտպանն է, հարստահարիչ բուրժուաների թշնամին: Ու հետևից հեռու սիրում է Լենինին, մի սեր, որը նա արտահայտում է Իլյիի մահվան ամիսի իր խորին վշտի միջոցով: Ծանոթ ուսն անվաստուց լուրով ցավալի լուրը, Ալին ախուր հառ, նույնիսկ ոչ մի բառ չի արտասանում... Բայց ահա դժվարին աշխատանքից հոգնատունք, «հալից ընկած» թիավարը, զգուշանալով ստաիկաններից, ալսինքն՝ մոռանալով հոգնությունն ու վտանգ, ներկայանում է սուս հյուպատոսին:

— «Լենին յո՞կ» — հարցնում է Ալին:

Կոտրվում:

Ինչպես մուրճ՝ առաջող:

Եվ — կրծքին խփելով Ալին՝

Մրմնջում է՝

«— Նե՛թ կարաշոք:

Եվ ապա, նայելով գետին,

Մի բանից ասես վախելով՝

Ասում է՝ դառնություն մի:

«— Ալի պոխ, Ալի — աղլիորք:

Խոնարհում է գլուխը ներքև,

Անխոս վիշտ է հայանում ու պատիվ —

Եվ —

Հեռանում է՝ բավելով պատին:

Չափազանց հնչեղ են թիավար Ալու՝ մրմնջով ապամ մի բանի բառերը: Այդ ամենը վկայում են խոր սիրուց բխած անկեղծ վշտի մասին և պոեմին հաղորդում են ուրույն կոյրիտ ու ինքնատիպություն:

Դժվար չէ նկատել, որ Չարենցյան լենինապատումում մեր առաջ հառնում է հեղափոխության հանճարի, մեծ մտածողի, իմաստուն առաջնորդի, սիրելի ու հարազատ մարդկային մարդու անմահ կերպարը:

Ն. Չարենցի լենինյան շարքի բանաստեղծություններն ու պոեմները համաշխարհային լենինյանայի դարերից են և ուսանելի դպրոց՝ Լրիտասարդ դրոշների համար:

Ավելի քան կեսդարյա պատմություն ունեցող հայ բանաստեղծական լեհինապատումը, որին իրենց արգասավոր մասնակցությունն են բերել մեր բոլոր հեղինակներն անխտիր, գնալով զարգանում ու հարստանում է: Այն սերունդներ է սնել ու պիտի սնի պրոլետարական ինտերնացիոնալիզմի, սոցիալիստական մարդասիրության ու հայրենասիրության, ժողովուրդների հղթարության ու խաղաղության վեհ գաղափարներով:

ЗАРОЖДЕНИЕ АРМЯНСКОЙ ПОЭТИЧЕСКОЙ ЛЕНИНИАНЫ

С. А. МАНУКЯН

Р е з ю м е

Армянская поэтическая Лениниана, у истоков которой стоят А. Акопян, В. Терян, Е. Чаренц, возникла вместе с победой Октября и является одной из первых и ярких страниц многонациональной советской литературной Ленинианы.

В статье кратко рассматривается армянская поэзия 1917—1920 гг. и оцениваются первые произведения на ленинскую тему, в частности «В. И. Ленину» (1910), «Ленин бессмертен» А. Акопяна, «Ленин», «Баллада о Владимире Ильиче, мужике и паре сапог», «Дядя Ленин», «Ленин и Али» (1924) Е. Чаренца и др.

Бессмертный образ гения революции, великого вождя, человеческого человека — В. И. Ленина, созданный в армянской поэзии, — явился символом свободы, мира и счастья на земле.